ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԵՐԱՍԽԱՀՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2012ԹՎԱԿԱՆԻ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում

-Համայնքի բնակիչների օրինական շահերը պաշտպանելու նպատակով 220 անգամ հանդես եմ եկել տարբեր միջնորդություններով Արմավիրի կաղաստրի տարածքային ստորաբաժանմունքում, նոտարական գրասենյակում, ոստիկանության բաժանմունքներում, քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնում և այլ կազմակերպություններում:

-Կատարել եմ համայնքի բնակիչ հանդիսացող 240 քաղաքացիների ընդունելություն, քննարկել բոլոր դիմումները, բողոքները, առաջարկությունները, որոնցից 210-ին տրվել է դրական լուծում:

-Աշխատակազմի միջոցով կատարել ենք համայնքի 16 ընտանիքների ընտանեկան նպաստի համակարգում փաստագրման աշխատանքները, ինչպես նաև ազգաբնակչության ամենամյա սեռա-տարիքային հաշվառման աշխատանքները:

-Հրավիրել եմ «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի» 1 նիստ, քննարկվել են համայնքի անապահով և ծնողազուրկ երեխաների իրավունքների պաշտպանության, դաստիրակության, ուսման հետ կապված հարցեր, 10 երեխաների տրամադրվել է դրամական օգնություն:

-Փաստաթղթերի պատճեներ, քաղվացքներ, տեղեկանքներ եմ տվել համայնքի 525 բնակիչների: Օժանդակել եմ գյուղացիական տնտեսություններին բանկերից, ֆինանսական կազմակերպություններից գյուղատնտեսական վարկեր ստանալու նպատակով:

-Հրավիրել և վարել եմ համայնքի ավագանու 9 նիստ որոնց արդյունքում ավագանին ընդունել է 37 որոշում: Արձակել եմ 8 կարգադրություն, ընդունել 40 որոշում: Կազմակերպել եմ համայնքային գրքերի, գործավարության մատյանների, արխիվային գործի, տարբեր բնույթի հաշվետվությունների, տեղեկատվությունների, հաշվապահական հաշվառման և այլ փաստաթղթերի կազմման և վարման գործընթացը:

Ֆինանսների բնագավառում

Կազմել և համայնքի ավագանու նիստի հաստատմանն եմ ներկայացրել համայնքի 2012 թվականի բյուջեն, աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

Ապահովել եմ բյուջեով նախատեսված եկամուտների հավաքագրումը, տնօրինել բյուջեի միջոցները՝ ապահովելով դրանց նպատակային օգտագործումը, ստորագրել բոլոր ֆինանսական փաստաթղթերը:

-Կազմակերպել և աշխատակազմի միջոցով իրականացրել եմ տարեկան կտրվացքով նախատեսված.

.գույքահարկի գանձումը	1650000 դրամ	110 %
հողի հարկի գանձումը	77530000 դրամ	108 %
վարձակալական հողի վարձը	150000 դրամ	100 %
տեղական տուրքեր և վճարներ	100000դրամ	100 %

Պաշտպանության բնագավառում

Աջակցել եմ զարնանային և աշնանային զորակոչերին, զինկոմիսարիատից ստացված 20 ծանուցագրերը հանձնվել է զորակոչիկներին, որոնցից 7 մեկնել են ծառայության:

Աշխատանքներ են տարվել հետախուզման մեջ գտնվող զորակոչիկների գտնվելու վայրը հայտնաբերելու ուղղությամբ, որպեսզի ոչ ոք չխուսափի զինվորական ծառայությունից:

-Կազմակերպել և անցկացրել ենք համայնքի ազգաբնակչության 2 սեմինար դասընթաց և 1 գործնական վարժանք համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանի, արտակարգ իրավիճակներում բնակչության տեղահանման սխեմայի սահմաններում: Համապատասխան կարգադրություններով և որոշումներով վերանայվել և համալրվել են նախատեսված ջոկատների և օղակների կազմերը: Վերակազմավորել ենք համայնքի քաղաքացիական պաշտպանության շտաբի կազմը, ապահովել ենք անհրաժեշտ տրանսպորտային, տեխնիկական, կապի միջոցների և այլ նյութական պարագաների ապահովվածության աշխատանքները:

Աջակցել եմ պատերազմի վետերանների սոցիալական, առողջապահական և այլ բնույթի խնդիրների լուծմանը, մայիսի 9-ին հաղթանակի օրվա կապակցությամբ «երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակության ծրագրի» շրջանակում համայնքի ավագանու թույլտվությամբ անցկացրել եմ միջոցառում՝ հրավիրելով պատերազմի վետերաններին և արցախյան ազատամարտիկներին, հանձնել ենք նվերներ:

Քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառում

Համայնքի հողերի օգտագործման և գոտիավորման սխեմաներին համապատասխան համայնքի ավագանու հաստատմանն եմ ներկայացրել համայնքային սեփականություն հանդիսացող հողերի աճուրդային եղանակով օտարելու, օտարման մեկնարկային գին, աճուրդային քայլի չափ և այլ պայմաններ սահմանելու մասին որոշման նախագծերը:
Անմիջական վերահսկողություն եմ սահմանել համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ և շարժական գույքի պահպանման նկատմամբ, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող հողերի պահմանմանը, դրանց օգտագործմանը ըստ նպատակային նշանակության:
Մատուցվել է մասնագիտական խորհրդատվական ծառայություն հողերը աղակալումից և էրոզիայից պահպանելու ուղղությամբ, նվազել է չմշակվող հողատարածքների քանակը և համայնքում առկա 530 հա գյուղատնտեսական նշանակության հողերից 2012 թվականին չի մշակվել ընդամենը 20 հեկար հողատարածք:
Կազմել և համայնքի ավագանու հաստատմանն եմ ներկայացրել համայնքի հողերի օգտագործման և գոտիավորման սխեմաներն ու համայնքի գլխավոր հատակագիծը, ինչպես նաև համայնքի հողային հաշվեկշիռը:
Համայնքի ավագանու սահմանած կարգով և սահմանված վարձավճարների համապատասխան որոշումներ եմ կայացրել համայնքի սեփականություն հանդիսացող 13 հա գյուղ նշանակության վարելահողը վարձակալությամբ համայնքի բնակիչներին հատկացնելու մասին, մրցույթում հաղթող ճանաչված 12 անձանց հետ կնքել եմ հողի վարձակալության պայմանագիր:
Անմջական վերահսկողություն եմ իրականացրել համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ և շարժական գույքի պահպանման նկատմամբ, կազմակերպել դրանց հաշվառման և գույքագրման աշխատանքները, կազմել համապատասխան փաստաթղթերը և ներկայացրել համայնքի ավագանու հաստատմանը:

Կոմունալ տնտեսության և բարեկարգման բնագավառում

-Համայնքի բյուջեի միջոցների հաշվին ամիսը 3 անգամ կատարվել է համայնքի բնակելի տարածքի աղբահեռացման աշխատանքները, հնարավորինս բարեկարգվել են բավականին թվով փողոցներ, մի քանիսը ավազապատվել՝ մոտավորապես 1,0կմ ընդհանուր երկարությամբ:
Կատարել ենք համայնքի ամբողջ բնակ տարածքի խմելաջրի նոր խողովակացանցի և ջրամբարտակի կառուցապատման աշխատանքները, համայնքի բնակիչները ունեն շուրջօրյա խմելաջուր, համայնքի բյուջեից ներդրվել է 20 մլն դրամ:
Մշտական աջակցություն եմ ցուցաբերել համայնքում գազաֆիկացման աշխատանքները կատարելիս, գազաֆիկացվել է ևս 7առանձնատուն:
-Գերեզմանատան պահակի միջոցով իրականացրել ենք գերեզմանատան տարածքի մաքրման, բարեկարգման և գերեզմանների պահպանման աշխատանքները համայնքի բյուջեի հաշվին:

Տրանսպորտի և կապի բնագավառում

Աշխատակազմի միջոցով կազմակերպել եմ համայնքային ենթակայության 3 կմ երկարությամբ ավտոճանապարհի և հարակից տարածքի պահպանման և վերանորոգման աշխատանքները:

Ապահովել եմ համայնքում հաշվառված տրանսպորտային միջոցների գույքահարկի գանձումը, նպաստել տեխզննման աշխատանքներին, ինչպես նաև համայնքում առկա տրակտորների վերանորոգման աշխատանքներին:

Կապի ոլորտում ապահովվել եմ «Վիվա Սել-ՄՏՍ» ընկերության շարժական գրասենյակի պարբերաբար այցելումը համայնք, որը տեղում տարաբնույթ ծառայություններ է մատուցել բաժանորդներին, հեռախոսա-համարների փաթեթային համակարգում ընդգրկել ենք ևս 10 բնակիչների, որի սակագինը 4 անգամ էժան է սովորականից:

Առևտրի և սպասարկման բնագավառում

-Աշխատակազմի միջոցով մշակել և ավագանու հաստատմանն եմ ներկայացրել առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի համայնքային գործունեության կանոնները:

-Տրվել է ոգելից խմիչկի և ծխախոտի արտադրանքի վաճառքի 2 թույլտվություն, յուրաքանչյուր եռամսյակ իրականացրել ենք համայնքում գործող առևտրի կետերի ստուգման աշխատանքները, կազմել բոլոր հաշվետվությունները և տեղեկանքները:

Հասարակական կարգի պահպանության բնագավառում

-Մշտական օժանդակություն ենք ցուցաբերել համայնքի տարածքը սպասարկող ոստիկանության աշխատակիցներին հասարակական կարգը պահպանելու, վարչական և քրեական իրավախախտումները բացահայտելու, կանխելու նպատակով:

-Ոստիկանության աշխատակիցների հետ համատեղ մշակել և իրականացրել ենք միջոցառումներ հատկապես երիտասարդների ու պատանիների մոտ գողության, խուլիգանության, թմրամոլության և այլ տեսակի իրավախախտումների կանխարգելման նպատակով:

Ոստիկանության աշխատակիցներից յուրաքանչյուր շաբաթ ստացել եմ համապատասխան տեղեկատվություն համայնքում իրավախախտումների և օպերատիվ իրավիճակի մասին:

Վարչական իրավախախտումների համար պատասխանատվության են ենթարկվել 3 մարդ:

Կրթության, մշակույթի և երիտասարտության հետ տարվող աշխատանքների բնագավառում

-Համայնքի երիտասարդների և դպրոցականների համար 2 անգամ կազմակերպել ենք համերգ-միջոցառում, տրամադրել համերգի տոմսերը:

Աջակցել եմ միջնակարգ դպրոցի բնականոն գործունեությանը, դպրոց հաճախելուց խուսափող երեխաների և նրանց ծնողների հետ տարել բացատրական աշխատանքներ, հետևել ուսման որակի և կրթամակարդակի բարձրացմանը: « նախակրթական փորձնական ուսումնական ծրագրի » շրջանակներում «կրթական ծրագրերի կենտրոնի» և համայնքի բյուջեի միջոցներով համայնքի դպրոցի շենքում վերանորոգել և կահավորել 2 սենյակ, սանհանգույց, և այժմ գործում է նախադպրոցական տարիքի 2 խմբակ, հոգում ենք երեխաների սնունդը և վճարում ուսուցիչների աշխատավարձը:

Աջակցություն եմ ցուցաբերել դպրոցի շրջանավարտների վերջին զանգի հանդեսի կազմակերպման գործում, ինչպես նաև նախորոք կատարել ենք շրջանավարտների անձնագրավորման գործերը և հանդեսի ժամանակ շնորհել անձնագրերը:

Ֆինանսական օժանդակություն եմ ցուցաբերել դպրոցի շենքի ընթացիկ վերանորոգման ժամանակ, լուծել ենք խմելաջրի հարցը, սակայն դպրոցի շենքը հիմնական վերանորոգման կարիք ունի:

Դպրոցի աշակերտների և համայնքի երեխաների համար կազմակերպել ենք ամանորի միջոցառում, տրամադրել համերգի տոմսեր և բաժանել նվերներ 240 երեխաների:

Համայնքի բյուջեի միջոցների հաշվին դպրոցի շենքում համայնքի երեխաների համար կազմակերպել եմ պարի խմբակի գործունեություն, որտեղ պարի դասեր են ստանում շուրջ 35 երեխաներ:

Առողջության, ֆիզկուլտուրայի և սպորտի բնագավառում

-Օժանդակել եմ համայնքի բուժկետի բնականոն գործունեությանը, լուծել էլեկտրաէներգիայի և ջեռուցման խնդիրները, բնակիչները ստանում են որակյալ և մատչելի բուժօգնություն :
Կազմակերպել եմ արևելյան մարտարվեստի պարապմունքներ շուրջ 20 պատանիների համար, որոնցից շատերը մարզային, հանրապետական մրցաշարերում գրավել են մրցանակային տեղեր և իմ կողմից արժանացել դրամական խրախուսանքի:
Պարբերաբար կազմակերպել և անցկացրել ենք ֆուտբոլի մրցաշարեր մյուս համայնքների թիմերի հետ:

Գյուղատնտեսության բնագավառում

Կատարել եմ համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի հողային հաշվեկշռի կազմման աշխատանքները, համագործակցելով մարզպետարանի գյուղվարչության և կադաստրի ստորաբաժանման հետ:
-Աշխատակազմի միջոցով աջակցել եմ համայնքի բոլոր հողօգտագործող տնտեսություններին շուրջ 500 հա. ցանքատարածությունների վրա գյուղատնտեսական աշխատանքները կատարելիս, հացահատիկի, բանջար- բոստանային կուլտուրաների, առվույտի և այլ մշակաբույսերի բերքահավաքի, բերքի իրացման, վաճառքի աշխատանքներին:
Մատուցել ենք մասնագիտական խորհրդատվական ծառայություն համայնքի բոլոր հողօգտանործողներին բույսերի ճիշտ մշակման, հիվանդությունների դեմ պայքարի, ցանքատարածությունների ոռոգման աշխատանքները կատարելիս:
Աշխատակազմի միջոցով կատարել ենք համայնքի բոլոր ցանքատարածությունների, բազմամյա տնկարքների և այլ մշակաբույսերի տարածքների և միջին բերքատվության հաշվառման աշխատանքները, կազմել համապատասխան հաշվետվությունները:
Աջակցել և խիստ հսկողություն եմ սահմանել համայնքում առկա բոլոր տեսակի անասունների և թռչունների վակցինացման աշխատանքները կատարելիս, կատարել եմ բոլոր տեսակի անասունների և թռչունների սեռա-տարքային հաշվառման աշխատանքները:
Համայնքի շուրջ 500 հա գյուղնշանակության հողատարածքի վրա կատարել ենք մկնանման կրծողների դեմ պայքարի աշխատանքներ ցինկի ֆոսֆիդի պատրաստուկով:
Կատարել ենք համայնքի ոռոգման ներտնտեսային ցանցի պահպանման, մաքրման և շահագործման աշխատանքները:

16.01.2013թ.
Արմավիրի մարզի Երասխահուն համայնքի
ղեկավար Արմեն Ավետիսյան